

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ 80 ԱՄԵԱՅ ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՑԱՌԻԿ ԾԱՇԿԵՐՈՅԹ-
ՊԱՐԱՅԱՆԴԵՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ ծուխի հիմնադրութեան 80-րդ ամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ 20 Դեկտեմբեր 2008 Շաբաթ, երեկոյեան ժամը 6.30 Էն սկսեալ « The Venetian Banquet Hall »-ի շքեղ սրահին մէջ:

Սրահի մուտքին սեղաններու շուրջ նստած կազմակերպիչ յանձնախումբի անդամուհիները, եղեւնի ծառերու վրայ դրուելիք գոյնզգոյն զարդեղէններու կապուած հրաւիրեալներու անունները եւ սեղաններու թիւերը ցոյց տուող թղթիկները ներկաներուն կը տրամադրէին:

Իսկ քովի սրահին մէջ կը ցուցադրուէր, հայրենի հանրածանօթ արուեստագետ Շմաւոն Շմաւոնեանի նկարչական գործերը: Մինչ այդ առատօրէն կը հրամցուէր զանազան համադամներ եւ ըմպելի:

Հանդիսութեան կը նախագահէր Գանատայի հայոց թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Ս. Եպս. Գալստանեան: Պատուոյ սեղանը Առաջնորդ Սրբազանի կողքին տեղ գրաւած էին, Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քինյ. Չարգարեան եւ Երեցկին Նայիրա Չարգարեան, Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Արա եւ Տիկ. Գալապրիսա Պոյաճեան, Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Պօղոս եւ Տիկ. Չարուկ Իշխանեան, Պապայեան Հիմնարկի Ատենապետ՝ Տիար Հայկ եւ Ալիս Սելեան:

Սրահը ամբողջութեամբ լեցուն էր աւելի քան 400 հրաւիրեալներով, որոնց կարգին ներկայ էր նաեւ Հոգշ. Տ. Հայրիկ Աթղ. Յովհաննիսեան:

Ներկաները յոտնկայս ունկնդրեցին Գանատայի եւ Հայաստանի զոյգ քայլերգները մենակատարութեամբ՝ գեղաձայն Օր.Անի Պապայեանի:

Բացման խօսքով հանդէս եկաւ Տիկ. Թալին Մուշեան, որ վերջերս յայտնի դարձաւ որպէս կարող հանդիսավար: Ան նախ ներկայացուց Պատուոյ սեղանը ու հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որ կատարեց սեղաններու օրհնութիւնը:

Ապա խօսք առաւ 80-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսի կարգադիր յանձնախումբի ժրաջան ատենապետուհի՝ Տիկ. Իրմա Էվրան ներկաներուն ծանօթացուց յանձնախումբի 6 անդամուհիները՝ Տիկիներ Անիթա Օհաննեսեան, Այտա Աֆարեան, Ֆրանս Գանտահարեան, Սեդա Քէշիշեան, Կրէյս Չաղլասեան եւ Օր. Լենա Իշխանեանը որոնք 7 ամիսներէ ի վեր տքնաջան աշխատանք տարած էին որպէսզի երեկոյթը յաջողութեամբ պսակուի:

Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անունով Ատենապետ՝ Պր.Պօղոս Իշխանեան 80-ամեակի տօնակատարութեան առիթով շնորհակալութիւն յայտնեց՝ Հոգեւոր Հովիւին, յարակից մարմիններուն ու կազմակերպիչ յանձնախումբերուն, ինչպէս նաեւ բարերարներուն, որոնք միշտ նեցուկ կը կանգնին եկեղեցւոյ բարգաւաճման:

Այս առթիւ Ծխական Խորհուրդի եւ յարակից մարմիններու անունով Տեր Զօր
Նուիրեց գեղեցիկ իւղաներկ պաստառ մը, ինչպէս նաեւ կազմակերպիչ
յանձնախումբերու բոլոր անդամներուն նուիրուեցաւ ծաղիկներ:

Այնուհետեւ Պապայեան Զիմնարկի Ատենապետ՝ Պր. Զայկ Սելեան, ինչպէս նաեւ
Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Պր. Արա Պոյաճեան իրենց սրտի խօսքերը
փոխանցեցին: Պր. Պոյաճեան ջերմօրէն շնորհաւորեց եկեղեցւոյ 80-ամեայ
տարեդարձը ու յաջողութիւն մաղթեց բոլորին:

Պր. Գրիգոր Շահմուրատեանի կողմէ պատրաստուած, Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
անցեալէն մինչեւ օրս յիշատակելի դրուագներ ներկայացնող խտասալիկը, սրահին
երկու պատերուն վրայ գետեղուած չորս սպիտակ պաստառներու վրայ մեծ
հետաքրքրութեամբ դիտուեցաւ:

Ապա հանդէս եկան Ս. Ե. Զ. Ա. եկեղեցւոյ « Սասուն » Պարախումբի պարման ու
պարմանուհիները, որոնք իրենց գեղեցիկ պարերով փայլ մը տուին երեկոյթին,
արուեստի ինչոյք մը սարքելով խանդավառեցին բոլոր ներկաները:
Կարճ դադարէ մը ետք պարախումբին շնորհալի պարուհիներէն Օր. Շողեր
ՄԷՆԷՆԿԻՅԵԱՆ գեղեկօրէն արտասանեց Գեորգ Էմինէն « Սասունցիներու պարը »
քերթուածէն հատուած մը եւ խումբը կրկին պարելու հրաւիրեց, որոնք արժանացան
ներկաներու ջերմ ծափահարութիւններուն:

Պր. Պօղոս Իշխանեան հրաւիրեց Տեր Զարեհը որպէսզի իր սրտի խօսքը փոխանցէ:
Տեր Զայրը մասնաւորաբար շեշտեց թէ, ջարդէն ազատած որբերը այս օտար հողերու
վրայ փոքրիկ հայրենիք մը հիմնեցին, տեսիլք ունեցան եւ մարմին դրին
այդ տեսիլքին ու կառուցեցին Զայ Առաքելական եկեղեցին: 1987 թուականին էր որ
նոր եկեղեցւոյ բացումը տեղի ունեցաւ ձեռամբ՝ երջանկայիշատակ Վազգէն Ա.
Կաթողիկոսի: Տեր Զայրը իր խօսքերը շարունակելով ըսաւ թէ՝ « Եկեղեցին Աստուծոյ
տունն է, բայց նաեւ ձեր տունը, կը ծառայեմ այս եկեղեցւոյ մէջ 12 տարիներէ ի վեր »:
Այս առիթով իր երախտագիտութիւնը ու շնորհակալութիւնները յայտնեց,
նախկին ու ներկայ ծխական Խորհուրդներուն, յարակից բոլոր մարմիններուն,
յանձնախումբերուն, մասնաւորաբար այս գեղեցիկ երեկոն պատրաստող
կազմակերպիչ յանձնախումբին գլխաւորութեամբ Տիկ. Իրմա Էվրանին, գրասենեակի
պատասխատուներ՝ Տիկ. Սոնիա Գոգորեանի, Տիկ. Տիանա Պօղոսեանի, Տիկ.Անի
Սարվարեանի եւ Տիկ. Յասմիկ Երեղեանի, Պր.Գրիգոր Շահմուրատեանի, Սասուն
Պարախումբին, իրենց սրտաբուխ նուէրներով սատար հանդիսացող բարերարներուն,
Պապայեան Զիմնարկին եւ վերջապէս Թեմական Խորհուրդին ու Առաջնորդ
Սրբազանին:

Տարւոյն Կինը՝ Տիկ. Սիրան Էլմասեան, Տարւոյն Մարդը՝ Պր.Կրէկորի Գասպարեան,
Տարւոյն Երիտասարդուհին՝ Օր. Թալին Աֆարեան եւ Տարւոյն Երիտասարդը՝ Բրշ.Սարօ
Սրկ. Սահակեան, շրջանաւարտ ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Պր. Աւետիս Էվրան,
Տիկ. Մոնա Սելեան եւ Պր. Լեւոն Մերմեր ձեռամբ՝ Տեր Զօր ստացան յուշատախտակներ:

Գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազանի տեղի ունեցաւ բարի տարեդարձ երգով
մոմավառութիւն, մասնակցութեամբ Պատուոյ Սեղանի հիւրերու, ներկայ ու նախկին
ծխական Խորհուրդի անդամներու եւ բոլոր կազմակերպիչ յանձնախումբերու:

Առաջնորդ՝ Բագրատ Սրբազանն ալ աւուր պատշաճի իր սրտի խօսքը փոխանցելէ
ետք ըսաւ թէ՝ « 2008 տարին կը վերջանայ իր վերելքներով ու վայրէջքներով, այսօր
ինձի համար իւրայատուկ հրճուանքի օր մըն է որ եկեղեցին կը տօնէ իր 80 - ամեայ

տարեդարձը »: Սրբազանը այս ուրախ օրուայ առիթով իր անսահման սերն ու գնահատանքը յայտնեց ու շնորհաւորեց Զոգեւոր Զովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեանը, իր երկարամեայ անխոնջ ծառայութիւնը նկատի առնելով իրեն նուիրեց Ռումանիոյ մէջ պատրաստուած « Ս. Խաչ »ը, ինչպէս նաեւ Երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառ Զայրապետէն գիրք մը:

Սրբազան Զայրը շնորհաւորեց նաեւ Ծխական Խորհուրդը, յարակից բոլոր մարմինները, կամաւոր աշխատողները, բոլոր անդամներն ու Թորոնթոհայութիւնը, եւ իր գնահատանքը յայտնեց հոգեւոր ծարայողներուն ու հիմնադիրներուն:

Գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեան, Ս. Երրորդութիւն Զայց. Առաք. Եկեղեցւոյ նախկին Ատենապետ՝ Պր. Աւետիս Էվրանի հայ եկեղեցւոյ բազմամեայ, նուիրեալ եւ ազգային - եկեղեցասիրական ծառայութիւնը նկատի առնելով, առ ի գնահատանք զայն պարգեւատրեց եւ կուրծքը զարդարեց Առաջնորդարանի առաջին կարգի « Սուրբ Խաչ » պատուոյ բարձր շքանշանով, որ սրահին մէջ ջերմ շնորհաւորական ծափահարութիւններով ողջունուեցաւ:

Այնուհետեւ Մոնրեալէն յատկապէս այս երեկոյթին համար հրաւիրուած « Էլի Պերպերեան » նուագախումբը, իրենց գեղեցիկ ձայնով ու երգերով մեծ ոգեւորութիւն ստեղծեցին սրահին մէջ, հրաւիրելով ներկաները պարահարթակ, ուր մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը զուարճացան: Այս առթիւ տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն, բախտաւորներ շահեցան գեղեցիկ նուէրներ:

Ներկաները մեծ ուրախութեամբ եւ գնահատանքով շնորհաւորեցին կարգադիր յանձնախումբը յագեցած եւ գոհունակութեամբ ակամայ մեկնեցան սրահէն: